

ՅՈՐԵԼԵԱՆ

ՀԱՒԼԱՔԱՐԻ «ԼՈՍԿԵԱՅ ՏՂԱՆ» (Նար-Դոսի ծննդեան 155-ամեակի առթիվ)

Նար-Դոսը (1867-1933) հայ գրամշակույթի այն երախտաւորներից է, որի ստեղծագործությունը սոցիալ-պատմական կեանքի փոփոխությունների պայմաններում շարունակում է պահպանել ինչպես իր արդիական նշանակությունը, այնպես էլ կենսական հարցադրումները: Հաւաքարցի բրդավաճառի լուռ եւ ինքնամփոփ որդին, աննկատ յայտնուելով գրական ասպարէզում, անհեռանկար եւ գորշ իրականութեան մէջ մարդու զգացմունքի, երազանքի անաղարտությունը, բարոյա-հոգեբանությունն ողբերգական անկումները եւ անխաթար առաքինության ապականությունը զուգակշռում էր գեղագիտական իր իտէալների լիարժէք բովանդակության, մարդասիրական գաղափարների, ինչպէս նաեւ բնաւորությունների սրբագործուած գեղեցկության կշռաքարով: Նար-Դոսի կեանքը եւ ստեղծագործության համապատկերն ամփոփ ներկայացնող այս յօդուածը համեստ տուրք է հայ քննադատական ունակի մի հոգեբանական ուղղության հոգեգէտ վարպետի ծննդեան 155-ամեակին:

Նար-Դոսը՝ Միքայէլ Յովհաննիսեանը ծնուել է 1867 թ. Մարտի 1-ին Թիֆլիսի Հաւաքար թաղամասի բրդավաճառ Զաքարի եւ Ժամանակակիցների վկայութեամբ գեղեցիկ եւ բազմաշնորհ Ովսանի ընտանիքում: Զաքարի առաջին կինը անժամանակ մահացել էր՝ ամուսնու խնամքին թողնելով իրենց երեք երեխաներին: Հաճելի բնաւորութեամբ եւ գրաւիչ արտաքինով «կոնա» Ովսանը բրդավաճառի երկրորդ կինն էր, որը մայրական նոյն գուրգուրանքով էր վերաբերում եւ իր չորս երեխաներին եւ թէ ամուսնու առաջին ամուսնութեան «պարգեւներին»:

Ընտանիքի խելացի մայրը, ի հեճուկս ամուսնու, աւելի շատ հակուած էր ուսմանն ու կրթութեանը, ցանկանում էր, որ զաւակներից գոնէ մէկ-երկուսը գիմնազիան աւարտեն, զարգացած եւ ժամանակահաղորդ լինեն, այլ ոչ թէ իրենց հօր պէս ամբողջ կեանքը մաշեն առեւտրական դեգերումների բովում: Ճիշդ է, անկեղծ ու անմարելի էր երեխաների տաժած անափ սէրը, ջերմությունն ու համակրանքը մօր նկատմամբ, բայց ուսման եւ աշխատանքի հարցերում «զգացում էր» նրանց հայրական գենը. նրանց մեծ մասը հմայուել էր հօր՝ արկածային թափառումներով լի շահութաբեր աշխատանքով:

Ընտանիքի եօթ զաւակներից միայն սակաւախօս Միքայէլը, հաղորդակից լինելով մօր գորովագին ձգտումներին, անընդհատ խոյս էր տալիս հօր՝ իր ընկալմամբ հրապոյրից, հետաքրքրությունից ու հեռանկարից զուրկ հոգեմաշ զբաղմունքից: Այս իրողությունը ուրուագծում էր այն անշրպետը, որը յետագայում առաջացաւ ապագայ արձակագրի եւ առեւտրի միջոցով հարստանալու մոլուցքով տարուած հօր ու եղբայրների փոխարարներությունների միջեւ:

Փոքրիկ Միքայէլը նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի Սուրբ Կարապետ եկեղեցու ծխական դպրոցում, որն իր նեղ ու անլոյս պատուհաններով, քարէ պաղ սալայատակով, ինչպէս նաեւ ժանտաղէմ վարժապետ Վասիլի միջնադարեան խաւարամիտ գաղափարներով, խիստ սահմանափակ մտահորիզոնով եւ կրթա-դաստիարակչական «մեքոտներով» աւելի շատ բանտ էր յիշեցնում, քան՝ կրթատեղի: Բնականաբար, ներամփոփ, ամօթխած, շուտ տպաւորուող եւ ներքին բարեկրթութեամբ

յատկանշուող Միքայելը դժկամութեամբ է յաճախում դպրոց յորջորջուած կամայականութիւնների եւ բռնութեան այդ վայրը:

Միքայելի կրթական ակնկալիքները չարդարացան ծխական դպրոցում: Վարժապետի դասաւանդման «հմտութիւնները» չհատեցին տառաճանաչութեան եւ ժամասացութեան դիրքնկալ սահմանները: Այս ամէնից դժգոհելով՝ Միքայելը թախանձում է մօրը, որ վերջինս իրեն առաջնորդի իր մանկութեան ճերմակ ու անբիծ անուրջների ներսիսեան դպրոցը:

Մայրն ընդառաջում է որդուն, եւ միասին գնում են Ներսիսեան դպրոց, որտեղ քմահաճ պարոն Գրիգորը հարցնում է. «... էդ կոշիկը, որ հաֆիլ իս, ի՞նչ կաշուց է...»: Պարոնի տարօրինակ եւ անիմաստ հարցին հաստատակամ երեխան մանկական պարզամտութեամբ պատասխանում է. « - Զգիտեմ պարոն... Թէ կարգին բան ունէ՛ք, ասէ՛ք...»¹:

Այս յանդուգն եւ ինչ-որ տեղ նաեւ ճշմարիտ պատասխանից յետոյ պարոն Գրիգորը կտրականապէս մերժում է երեխային այդ դպրոց ընդունել, իսկ Ովսանի՝ մի անմիտ պատասխանի պատճառով տղայի ապագայի հետ չխաղալու հնարաւոր բոլոր միջամտութիւններն անցնում են ապարդիւն: Այսպիսով անէանում է Ներսիսեան դպրոցում սովորելու եզակի հնարաւորութիւնը, փոխարէնը քառապատկում ուսման նրկատմամբ սկզբնաւորուած սէրն ու ձգտումը, որը ուսումնատենչ Միքայելին հոգատար մօր ուղեկցութեամբ մղում է նիկոլաեան երկդասեայ դպրոց: Վերջապէս քաջահմուտ տեսուչ Պօղոս Քաթանեանի օգնութեամբ նրան յաջողում է ընդունուել այդտեղ:

Նիկոլաեան դպրոցի ուսումնառութեան առաջին իսկ տարիներից Միքայելն իր օրինակելի վարքագծով, բարձր առաջադիմութեամբ յայտնւում է շրջապատի ուշադրութեան կենտրոնում: Նա այդ տարիներից սկսած ընթերցում է պատանի աշխարհայեացքի ձեւաւորմանը մեծապէս նպաստող եւ յետագայում իր ստեղծագործութեան մէջ լուրջ բեկում առաջացրած ժամանակի առաջադէմ պարբերական մամուլի («Մշակ», «Մեղու», «Նոր-Դար», «Մուրճ») ուշագրաւ էջերը: Անյազ ծարաւով ընթերցանութիւնը նրա մէջ գցում է ստեղծագործելու կայծերը, եւ նա յանպատրաստից սկսում է խորհել ու բանաստեղծել բնութեան ու մարդկանց շուրջ:

Միքայելը յաջողութեամբ աւարտում է նիկոլաեան դպրոցը եւ ընդգրկւում տասը հոգուց բաղկացած այն խմբում, որը տեսուչ Քաթանեանի գլխաւորութեամբ ուղեւորուելու էր Քութայիսի նահանգի Խոնի աւան, որպէսզի մասնակցէր տեղական ուսուցչական սեմինարիայի ընդունելութեան քննութիւններին: Անսպասելի էր, բայց խմբի տասը հոգուց ընդունելութեան քննութիւններից բացարձակ գերազանց գնահատական են ստանում միայն երկու պատանի, այդ թւում՝ նաեւ Միքայելը: Վերջինս լիայոյս էր, որ, յաջողութեամբ յաղթահարելով սեմինարիայում սովորելու դժուարութիւնները, իր աւանդն է թողնելու նոր սերնդի կրթութեան եւ լուսաւորութեան գործում: Յաւ ի սիրտ, Միքայելի նուիրական նպատակները ոչ մի աղերս չունէին հօր եւ խորթ եղբայրների առեւտրական ծրագրերի հետ, նրանց համար առաջին տեղում առեւտուրն էր:

Լուսաւոր ապագայի երազներով ապրող պատանու սիրտը դառնութեամբ է լրցնում այն նորութիւնը, որ առեւտրով տարուած իր հայրը հրաժարուել է վճարել սեմինարիայի վարձութեան կողմից պահանջուող 100 ուրլի վարձավճարը նոյնիսկ այն դէպքում, երբ սեմինարիան հաշուի էր առել Միքայելի ինքնակրթութեամբ իւրացրած մանկավարժական գիտելիքները, գրականութեան ուսուցիչ դառնալու անսահման

¹ Տե՛ս Սարգսեան Ս., Նաւ-Դոս, Երեւան, Հայաստան հրատ, 1973, էջ 13:

սէրն ու ձգտումները եւ խոստացել էր, որ երկրորդ տարուանից նրա ուսման վարձը վճարուելու էր պետութեան միջոցներից: Ապարդին էր հօր քարացած խիղճը շարժելու ցանկացած փորձ: Այսպէս, Միքայէլը անտրամադիր եւ մինչեւ հոգու խորքը վիրաւորուած վերդառնում է Թիֆլիս:

Շուրջ մէկ տարի պարապութեան մատնուելով, զբաղուելով ինքնակրթութեամբ եւ տեսնելով հօր անյաջողութիւնները բրդավաճառութեան ասպարէզում՝ հաւաքարցի լռակեաց տղան ընդունում է Միքայէլեան արհեստագիտական դպրոց, որտեղ ուսումնառումն սնունդը անվճար էր: Այստեղ փականագործի մասնագիտական գիտելիքներին զուգընթաց դասաւանդում էին նաեւ լեզուաբանական եւ հասարակագիտական առարկաներ:

Յիրաւի, ճշմարիտ է ժողովրդական իմաստնութիւնը. «Ձկայ չարի՞՞ առանց բարի-ի»: Արհեստագիտական դպրոցում սովորելու տարիներին նոր երանգներով դրսեւորւեցին Միքայէլի գրական, մշակութային հակումները: Տոհմիկ գրականութեան երեւելիների (Բաֆֆի, Միք. Նալպանտեան, Գ. Սունդուկեան, Ռ. Պատկանեան, Ղ. Ալիշան) գործերը կարդալուն զուգահեռ ապագայում նրանց շարքերը համալրող արհեստագիտական դպրոցի սանն իր մտահորիզոնն ու գեղագիտական խստապահանջ մօտեցումներով ձեւաւորուող ընկալումներն ընդլայնում էր նաեւ արտասահմանեան հեղինակների (Ա. Պուշկին, Մ. Լերմոնտով, Լ. Տոլստոյ, Ֆ. Դոստոեւսկի, Ա. Չեխով, Գի դը Մոպասան, Է. Զոլա, Դէնի Դիդրո, Է. Հարտման եւ այլք) գրական եւ փիլիսոփայական գործերի թարգմանութիւնները մեծ հիացմունքով ընթերցելով, որոշ դէպքերում (Է. Հարտման) քննադատական վերաբերմունք արտայայտելով²:

Ահա այսպէս, ամբողջ օրը վայելելով գրքերի անդաւաճան «ընկերութիւնը», Միքայէլը մեծ տխրութեամբ էր գնում արհեստագիտական դպրոց, որը գրեթէ առնչութիւն չունէր իր նախասիրութիւններին: Միայնութեան տխրութիւնը մի փոքր փարատում է, երբ անակնկալ հանդիպում է հեռաւոր Զաքարթալայից Թիֆլիսի արհեստագիտական դպրոց ընդունուած աղքատ ձկնավաճառի որդուն՝ ապագայում շնորհալի բանաստեղծ ու թարգմանիչ դարձած Ալեքսանդր Մատուրեանին: Միքայէլն ու իրենից երկու տարով մեծ Ալեքսանդրը նոյն ներաշխարհն ունէին, երկուստեք հասկանում էին միմեանց, համակարծիք էին կեանքի, գրականութեան, մարդկային փոխյարաբերութիւնների անանց արժէքների գնահատման հարցերում:

Աւարտում էին արհեստագիտական դպրոցում սովորելու քիչ թէ շատ երանելի տարիները: Արհեստավարի դազգահի առաջ գրական հարցերից, իրենց ծրագրերից ու երազանքներից զրուցող ընկերները հրաժեշտ են տալիս միմեանց՝ յայտնուելով գրամշակութային տարբեր աշխարհներում: Միքայէլը մնում է հայրենի քաղաքում՝ իրեն նուիրելով խմբագրական աշխատանքներին, իսկ Ալեքսանդրը մեկնում է հեռաւոր Ռուսաստան: «... Եթէ Մուրացանը «գամուած» էր Թիֆլիսում եւ իր «նիթականը հայթայթելու համար» արխի բուրժուայ Միրզոնների մօտ էր ծառայում հաշուապահի պաշտօնով եւ կամ իր (Նար-Դոսի. - Տ. Մ.) վաղեմի ընկեր Ա. Մատուրեանը Մոսկուայում ժամհարեանների բանկում պարզ գործակատար էր, ապա Նար-Դոսը կարող էր միխթարուել, որ ինքը գոնէ «լրագրական ասպարէզում» է եւ իր աշխատութիւնները կարողանում է «ծրիապէս» տպագրել թերթերում»³, - նկատում է Գ. Լեւոնեանը:

² Նար-Դոսը, դեռ վաղ տարիքից ծանօթանալով Հարտմանի՝ հակատագրի շուրջ իտէլիստական տեսակէտին, ֆննդաւատում էր այն եւ առաջ բերում մարդկային հասարակութեան վնասող դերը եղանակ կեանք ունենալու հարցում:

³ «Գրական թերթ», շաբաթաթերթ, Երեւան, 1933, թիւ 13 (41):

Միքայելի պատանեկան վաղ տարիքի բանաստեղծական թոթովանքները շուտով իրենց տեղը գիշում են ստեղծագործական որոնումների նոր արգասիքներին: Նա իր ուժերը փորձում է գրական գրեթե բոլոր ժանրերում՝ բանաստեղծություն, պատմուածք, կատակերգություն, ֆելիետոն, բայց յիշեալներից ոչ մէկը չի ամբողջացնում գրականութեան դաշտ մտնող խստապահանջ հեղինակի մտասեւեռումները:

Միխո-Օհան⁴, այնուհետեւ Նար-Դոս գրական ստորագրությունների ներքոյ ստեղծագործող Միքայել Յովհաննիսեանը ծայրաստիճան համեստ էր իր անձի եւ ստեղծագործութեան նկատմամբ: Այս մասին են վկայում Ստ. Զօրեանի յուշերի պատառիկները. «Ժամանակակիցների համեմատ նա (Նար-Դոսը, - **Տ. Մ.**) ծայրայեղօրէն համեստ էր. սակաւախօս, ինքնամփոփ ու հայեցական բնատուրութեամբ՝ երբեք չէր խօսի իր անձի մասին, երբեք զգացնէ չէր տայ, որ ինքը վիպասան է կամ գրականութեամբ զբաղուող մարդ. մինչեւ ինքն չխօսէիր՝ նա խօսէ չէր բանայ գրողների եւ գրականութեան մասին, մանաւանդ իր գործերի մասին:

...Ինչպէս գրականութեան մէջ, այնպէս էլ կեանքում տանել չէր կարողանում պոռոտ ու ճոճումն բաներ: Սիրում էր «պարզին վսեմութիւնը»⁵:

Միքայելը, լսելով իր ներքին ձայնին եւ հաւատարիմ մնալով գաղափարա-գեղարուեստական անխառն համոզումներին, մէկընդմիջտ ազատուեց բանաստեղծութեան դիւթիչ ուժից եւ անմնացորդ նուիրուեց էպիկական սեռի արձակ ժանրերին (պատմուածք, վիպակ, նորավէպ, վէպ):

«Ճշմարիտ բարեկամ», «Նունէ» (1886), «Քնքուշ լարեր» (1887), «Զագունեան» (1890) երկերը, ստեղծագործական փորձեր լինելով հանդերձ, յագեցած են հեղինակային ինքնատիպ մտայղացումներով, սրատես դիտողականութեամբ եւ ուշալիստական պատկերներով, որոնք իրենց բարենպաստ ազդեցությունը թողեցին Նար-Դոսի ստեղծագործական յետագայ շրջանի նշանաւոր ձեռքբերումների վրայ: Վերոյիշեալ երկերն ուշարժան են նաեւ այն իմաստով, որ դրանք հանգամանօրէն ուրուագծում են Նար-Դոսի ստեղծագործական որոնումները իրապաշտութեան զարգացման ճանապարհին:

Նար-Դոսը ստեղծագործական իւրայատուկ ներքնատեսութեամբ եւ մարդկային ճակատագրի նկատմամբ խոր կսկիծով համակուած յայտնուեց գրական ասպարէզում: Նրա ներշնչանքի աղբիւրը ժամանակակից բարդ ու ներհակ կեանքի զարգացումներն էին: Շրջահայեաց եւ հոգեգէտ արձակագիրը Գր. Զօհրապի նման «անտարբեր» էր կեանքի «մեծ պատահարների» նկատմամբ, փոխարէնը լուսաւորը տեսնելու առաքելութեամբ աւելի շատ գեղարուեստականացնում էր արտաքուստ աննշան, բայց ներքուստ հասարակական մեծ ողբերգություն բովանդակող, ինչպէս նաեւ բարոյականություն, հոգեկերտուածք եւ վարքագիծ ձեւաւորող երեւոյթներ: Նար-Դոսը, իր ժամանակակցի՝ Ալ. Շիրուանզադէի խօսքով ասած՝ «կեանքի հայելին» (գրականությունը - **Տ. Մ.**) շրջելով դէպի մարդկային ներաշխարհի կողմը, ցոյց էր տալիս կենսական միջավայրի անդրադարձումներն այնտեղ:

Գեղագիտական խորաթափանց տեսողականութեամբ, հոգեկերտուածքների բարոյա-հոգեբանական ընդհանրությունների տիպական ամփոփ գեղարուեստականաց-

⁴ «Ճշմարիտ բարեկամ» վիպակը «Նոր-Դոս» թերթում տպագրուել է «Միխո-Օհան» գրական ստորագրութեամբ: Տե՛ս «Նոր-Դոս», թերթ, Թիֆլիս, 1886, թիւ 31-35 համարները:

⁵ Զօրեան Ստ., Յուշերի գիրք, Երեւան, Հայպետհրատ, 1958, էջ 156, 162: Ստ. Զօրեանի այս յուշն առաջին անգամ տպագրուել է Նար-Դոսի մահուան կապակցութեամբ: Տե՛ս նաեւ «Գրական թերթ», շաբաթաթերթ, Երեւան, 1933, թիւ 13 (41):

մամբ Նար-Դոսն իր «Մեր թաղը» նոր վիպաշարում ծննդավայրի ընդհանուր համայնապատկերից առանձնացնում է անհեռանկար, օտարուած «աշխարհում» ինքնայօշոտ-մամբ գոյատեւող մարդկանց մի տեսակ, որը սոցիալական կեանքի դժնդակ պայմանների եւ տարիների ընթացքում ձեւաւորուող թոյլ բնաւորութեան հետեւանքով դուրս է մնացել կեանքի բնականոն զարգացման ուղեծրից: Անվերջ խարխափելով սնոտիապաշտութեան եւ անգիտութեան շրջապատոյտում՝ նրանցից ոմանք կատարեալ չարիք են դարձել ոչ միայն իրենց ընտանիքի, այլեւ հասարակութեան համար: Ժամանակի ընթացքում կորցնելով բանականութիւնն ու խիղճը՝ մարդը կարծես դադարել է մարդ լինելուց, վերածուել է բնազդով ապրող գազանի, այլ խօսքով՝ տեղի է ունեցել բարոյահոգեբանական անկում, որն ահագանգ է նաեւ մեր օրերում: Այս իմաստով Նար-Դոսը մշտարդիական հեղինակ է: Ուստի ներկայ ժամանակներում ունենք հրամայականապահանջ, ականջալուր լինել հայ գրամշակոյթի ճշգրիտ եւ տրամաբանական զարգացումներին:

Նար-Դոսի ռէալիզմի հասարակական ներգործուն ուժն ու ազդեցութիւնը պայմանաւորուած են հին ու բարի ավանդոյթների աղաւաղման եւ խաթարման կենտրոնում է յայտնուած ներքնախաւերի բազմակողմանի եւ ընդգրկուն իրողութիւններով: Արագ զարգացող դարաշրջանում հեղինակը փորձում է տեսնել՝ հին ու նոր կացութաձեւերի բախումների հիմքի վրայ եւ կեանքի ու մահուան յարաբերակցութեան տիրոջ թում ինչպէս են ձեւաւորում մարդկային հոգեկերտուածքն ու բարոյականութիւնը: Դեղագէտ-հոգեբանը հակադրութեան միջոցով բացայայտում է մարդկային էութեան տարաբեւեռ կողմերը:

Նար-Դոսի՝ խնդրոյ առարկայ նորավիպաշարի գաղափարական ենթաշերտերում բացառիկ քննութեան են ենթարկում մարդագիտութեան հիմնադրոյթները: Արուեստագէտին, ինչպէս իրաւացիօրէն նկատել է գրականագէտ Գ. Յովհաննիսեանը, առանձնապէս հետաքրքրում էր, թէ սոցիալական, հասարակական այդ փոփոխութիւններն ինչ անդրադարձում են գտնում մարդու ներաշխարհում⁶:

Նար-Դոսը հասարակական բուռն կեանքի անցուդարձերի փոխարէն խորութեամբ ուսումնասիրում էր փորձութիւնների բովում յայտնուած անհատի այն հոգեբանութիւնը, որը ձեւաւորում է ոչ միայն փորձութեան ընթացքում դրսեւորուող աշխարհընկալման, այլեւ միջավայրի դրական եւ բացասական հակազդեցութիւնների միջոցով: Վերլուծելով կեանքի հակասական կողմերը, մարդկային հոգեկերտուածքն եւ վարքագիծը՝ Նար-Դոսը «Սպանուած աղաւնին» վիպակում նկատում է, որ ժամանակակից մարդը ձեռք է բերում բարոյական մէկ այլ նկարագիր, որն աւելի պարզորոշ երեւում է կին-տղամարդ փոխյարաբերութեան դրսեւորման կերպերում: Սիրոյ յաւերժական թեման այս արձակագրի գրչի տակ արտացոլում է մարդու ինքնութեան եւ հասարակութեան պարտադրած յարաբերութիւնների բախումների մակարդակներում:

Նար-Դոսի «Աննա Սարոյեան» նամակագրական վիպակը թէեւ գտնւում է միջ-ժանրային տիրոջ թում, սակայն իր գրական-պատմական արժէքով եւ հոգեբանական անցումների իմաստով կարեւոր տեղ է զբաղեցնում հայ գրականութեան մէջ: Նար-Դոսի «Աննա Սարոյեանը» իր առաւելութիւններով եւ թերութիւններով հանդերձ բացառիկ քննութեան է ենթարկում տարաբնոյթ ազդեցութիւնների խաչմերուկում յայտնուած մարդու հոգեբանութիւնը եւ կամային յատկանիշները: Ստեղծագործութեան հոգեբանական խորքայնութիւնը, ինչպէս նաեւ անցումները տեսանելի եւ քրն-

⁶ Տե՛ս Յովհաննիսեան Գ., Նար-Դոս, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1959, էջ 13:

ների են Արթուր Շոպենհաուերի փիլիսոփայության համակարգում: Այն գալիս է հաստատելու, որ անկախ արտաքին հանգամանքների ազդեցություններից՝ մարդու հոգեբանությունն մեջ տեղի են ունենում զարմանալի երեւոյթներ:

Նար-Դոսը գիտականօրէն չի տիրապետել հոգեվերլուծութեանը, բայց իր ստեղծագործական ներքնատեսութեամբ կարողացել է յստակօրէն վերլուծել մարդու ներաշխարհն ու բնաւորութեան դրսեւորման կերպերը: Վիպակի տարաբնոյթ դիտարկումները անձնասպանութեան փիլիսոփայական դիտակէտով ակնյայտ են դարձնում, որ արձակագիրը գիտական որոշակի ոճաւորմամբ է ուսումնասիրել մարդու հոգեբանական զարգացումները: Ներաշխարհի անհասկանալի վերլուծութիւնները մարդուն մեկուսացնում են հոգսաշատ առօրեայի տիրոյթներից: Ըստ հեղինակի՝ սոցիալական յեղաբեկումները ներգործում են մարդու ոչ թէ հոգեբանութեան, այլ վարքաբանութեան վրայ: Կամային թոյլ որակներ եւ անհեռանկար կենսաձեւ ունեցող մարդիկ անխընայ կործանւում են կեանքի փորձութեան ճանապարհին:

«Պայքար» վէպը իւրովի իմաստաւորեց կենսական, գաղափարա-գեղարուեստական բարդ եւ ներհակ այն մաքառումները, որոնք, լինելով խիստ արդիական բոլոր ժամանակների համար, իրենց անմիջական ազդեցութիւններն են թողնում անհատի ներաշխարհային զարգացումների եւ հասարակական դատողութիւնների վրայ: Խընդրոյ առարկայ վէպի նախնական շորս տարբերակների բնագրային ուսումնասիրութիւնները փաստում են, որ Նար-Դոսն իր այս երկի գաղափարա-բովանդակային եւ պատումային նոր ուղիների որոնման ճանապարհին աւելի ընդգծուած երանգներ է հաղորդել անհատի ինքնաճանաչողութեան եւ ինքնամաքրման խնդիրներին, ինչպէս նաեւ հասարակութեան փոխյարաբերութիւններին: Վիպական կառոյցում ներդաշնակ միասնութիւն են կազմում ազգային կենցաղը, խոհերը, կնոջ ազատութեան եւ իրաւահաւասարութեան մասին առաջադրուած հիմնահարցերը: Սիրոյ, երջանկութեան, բանականութեան, խղճի եւ ընտանեկան յարկի առջեւ բարոյական պարտականութիւնների նարդոսեան ընկալումները ուղենշային են մարդու գոյութեան ընթացքում:

Էպպէս տարբերուելով հայ վիպասանութեան նախընթաց աւանդներից՝ Նար-Դոսի «Մահը» վէպն իր կենսաճանաչողութեան լայն ընդգրկմամբ գեղարուեստական հարթութեան վրայ շօշափում է կեանքի եւ մահուան առեղծուածի փիլիսոփայական մեկնաբանութեան իրողութիւններ, որոնք արագընթաց ժամանակների բովում չեն կորցնում իրենց արդիական նշանակութիւնը: Հոգեդէտ գրողը նրբօրէն նկատել է փիլիսոփայական տարաբնոյթ ազդեցութիւնների տիրոյթում գտնուող մարդու ներաշխարհային ալեկոծումները, յեղաբեկումները եւ կամքի դրսեւորման կերպերը: «Մահը» վէպի բազմապլան դիտարկումներն անձնասպանութեան փիլիսոփայական հայեցակարգով փաստում են, որ Նար-Դոսի այս լայնակտաւ երկը հայ վիպագրութեան համապատկերում իւրովի է իմաստաւորում թէ՛ ֆիզիքական եւ թէ՛ բարոյական մահուան փիլիսոփայութիւնը:

Դիտարժան են ինչպէս համաշխարհային⁷ եւ հայ գրականութեան այն աւանդները, որոնք ազդել են Նար-Դոսի գեղարուեստական հակումների ձեւաւորման վրայ, այնպէս էլ վերջիններիս գրական յետագայ ներթափանցումները գրամշակութային բոլորովին այլ իրականութիւն: Թէեւ ծագումով «ռուսախառն հայ», բայց ֆրանսալեզու գրող Անրի Թրուայան (Լեւ Տարասով - Լեւոն Թորոսեան, 1911-2007) հայկական թե-

⁷ Նար-Դոսն իր յօդածներից մէկում («Յարգելի ընկեր») խոստովանել է, որ յանձինս՝ Տուրգենևի, Դոստոևսկու, Դոնշառովի, Տոլստոյի, իր վրայ «խոր եւ անջնջելի տպաւորութիւն է գործել» ռուս գրականութիւնը, եւ

մաներով առանձնապէս չի զբաղուել⁸, սակայն նրա ստեղծագործութեան խորքերում, մասնաւորապէս «Սարգը»⁹ (1938) վէպում նկատուում են գրական հետաքրքիր ազդեցութիւններ, որոնք կապուած են Նար-Դոսի «Մահը» երկի հետ¹⁰: Արդեօք Լեւոն-Անրին կարգացել էր Նար-Դոսի այդ ստեղծագործութիւնը ուսերէնով միջնորդաւորուած՝ դժուար է ասել, թէեւ հակուած ենք կարծելու, որ Նար-Դոսի «Մահը» վէպի ուսերէն թարգմանութիւնը (1931 թ.) ինչ-որ ճանապարհով, այնուհանդերձ, հասել է Անրի Թըր-ուայային¹¹: Առաջնայինն այստեղ, սակայն, գրական այն առնչութիւններն են, որոնք երկխօսութեան հնարաւորութիւններ են ստեղծում արինակից այս երկու գրողների ստեղծագործութիւնների համար:

Մարդկային ճակատագրի նկատմամբ անհանգիստ մտահոգութիւնները, կեանքի եւ մահուան բարոյա-հոգեբանական ու փիլիսոփայական ընկալումները հետաքրքիր զարգացումներ կանխորոշեցին հոգեբանական ուշալիզմի այս վարպետի ստեղծագործական աշխարհում: Նար-Դոս գրողի անձը, գրականութիւնն ու գրելաոճը բնութագրելիս բազմիցս են օգտագործւում «պարզ» եւ «պարզութիւն» հասկացութիւնները: Յիրաւի, նրա գրականութիւնը զերծ է ամէն տեսակի աւելորդաբանութիւնից: Նար-Դոսը տարօրինակ գրող է բառի ամենադրական իմաստով: Նրա գրեթէ բոլոր հերոսները ծուռումուռ փողոցների անձուկում՝ «մեղ օրերի» մէջ, լաւ օրեր երազող մարդիկ են: Որպէս գրող՝ Նար-Դոսը դարձաւ իր իսկ որդեգրած հետեւեալ հաւատամքի կրողը. «Բաւական չէ, որ գրականութիւնը ցոյց տայ միայն այն, ինչ որ կայ կեանքի մէջ. պէտք է նա ցոյց տայ եւ այն, ինչ որ չկայ եւ ինչ որ ցանկալի է, որ լինի»¹²:

Արուեստի եւ գրականութեան մէջ պարզը եւ հասարակը նախընտրող Նար-Դոսը նոյնքան համեստ էր նաեւ ընտանիքում: 1908 թ. Փետրուարի 10-ին տեղի է ունենում նրա եւ Օլգա Եգորովնայի պսակադրութիւնը: 25 տարիների ուրախ ու երջանիկ համատեղ կեանքի ընթացքում ամուսինները ունեցան երկու զաւակներ՝ Յասմիկ եւ Նար Յովհաննիսեանները: Ծնողները ծով հոգատարութեամբ եւ համբերութեամբ ամէն ինչ անում են իրենց երեխաների լաւ կրթութեան եւ դաստիարակութեան համար:

Իր երկերը հոգեբանօրէն հիմնատրեղու համար օգտուել է նրանց ստեղծագործութիւններից: Տե՛ս Նար-Դոս, Երկերի ժողովածոյ հինգ հատորով, հ. 5, Երեւան, Հայաստան հրատ., 1971, էջ 288:

⁸ Թերեւս եզակի բացառութիւն կարող է կազմել 1947-1950 թթ. գրած «Երկրագնդի տեղողութեան չափ» («Tant que la terre durera») եռագրութիւնը:

⁹ Տե՛ս Թրուայա Ա., Սարգը, ֆրանս. թարգ.՝ Շահբազեան Պ., Երեւան, 2009, 188 էջ:

¹⁰ Այս մասին աւելի մանրամասն տե՛ս Գանգիշեան Ս., Միջուկի տրոհումը, Սփիտաֆայ գրականութեան պատմութիւն, Գիրք 1, Ներածութիւն, Երեւան, 2011, էջ 300-310: Տե՛ս նաեւ Գանգիշեան Ս., Նար-Դոս եւ Անրի Թրուայա. կերպարների տիպաբանական ընդհանրութեան դրուագներ // «Հայ-ֆրանսիական գրապատմական առընչութիւններ» գիտական նստաշրջան (Երեւան, 1 Նոյեմբերի, 2018), Երեւան, ՎՄՎ-Պրինտ, 2019, էջ 4-14:

¹¹ Ուշաբժան է, որ Նար-Դոսի «Պայքար» եւ «Մահը» վէպերի հայերէն բնագրերը հետաքրքրել են նաեւ սփիտաֆայ գրող Վազգէն Շուշանեանին (1903-1941): Վերջինիս «Սիրոյ եւ արկածի տղաբը» վէպի հերոսը՝ Նուանդը, թիֆլիսեան դեգերումների օրերին արտաստմի աչերին, յուզումնալից խեղդուած եւ դողափառ դրութեան մէջ է աւարտում «Մահը» վէպի ընթերցումը, իսկ «Պայքարը»՝ անձկութեամբ եւ անգութ ցաւով է կարդում եւ երբ աւարտում է վէպը, թախծօրէն խոստովանում է, որ ինքը սիրում է այն գրքերը, որոնք վերջանում են «տխուր ու եղբրական խորքի մը վրայ, ինչպէս գրեթէ բոլոր մեր հաճոյքի օրերը»: Տե՛ս Շուշանեան Վ., Սիրոյ եւ արկածի տղաբը, Պէյրութ, Վահէ Սէթեան տպարան, 2012, էջ 42, 56, 67:

¹² Նար-Դոս, Երկերի ժողովածոյ հինգ հատորով, հ. 5, Երեւան, Հայաստան հրատ., 1971, էջ 352:



Նկ. 1. Նար-Դոսն իր կնոջ՝ Օլգա Եգորովնայի եւ զաւակների՝ Յասմիկի եւ Նարի ուղեկցութեամբ

Որդու հետ կիսելով իր գրական անուան մի մասը՝ Նար, վերջինիս էր փոխանցել նաեւ արուեստի նկատմամբ անհուն սէրն ու համակրանքը, գուցէ նաեւ ստեղծագործական ներքնատեսութեամբ կանխագուշակել իր որդու ապագայ բեղմնաւոր ճանապարհը երգարուեստում. Նար Յովհաննիսեանը դարձաւ ՍՍՀՄ ժողովրդական արտիստ։ Յաւօք սրտի, Նարը չամուսնացաւ եւ ժառանգներ չունեցաւ։ Նար-Դոսի՝ ներկայումս երեւանաբնակ ծոռը՝ Միքայէլ Մարութեանը, որն ի դէպ կրում է իր մեծ պապի անունը, սերում է արձակագրի աղջկայ՝ Յասմիկի ճիւղից։ Պարօն Միքայէլի եւ նրա բարեհամբոյր ընտանիքի հետ զրոյցների ժամանակ բացայայտեցինք նաեւ Նար-Դոսի՝ մեզ յայտնի արխիւներում պահուող մի լուսանկարի պատմութիւնը։ Ստորեւ ներկայացուող լուսանկարի յետնամասում յիշատակում է, որ այդ աղջիկը Նար-Դոսի որդեգիր զաւակն է։

Արձակագրի շառաւիղների հաւաստմամբ՝ Մարիա Եգորովնան Նար-Դոսի կնոջ՝ Օլգայի քրոջ երեք դուստրերից մէկն է։ Օլգայի քրոջ վաղաժամ մահից յետոյ երեք դուստրերից մէկին՝ Մարիային որդեգրել է Նար-Դոսի հիւրընկալ ընտանիքը, իսկ միւս երկուսին՝ արձակագրի բարեկամները։ Յետագայում Մարիան, ամուսնանալով Նար-Դոսի եղբօրորդու հետ, ունեցել է մէկ տղայ։ Վերջինիս որդիներից մէկը՝ Իգորը ներկայումս բնակւում է Վրաստանում, իսկ Վլատիմիրը՝ Ռուսաստանի Դաշնութիւնում։ Մարութեանների ընտանիքի հետ հանդիպման ընթացքում մեզ յաջողուեց որոշ հարցերի շուրջ տեսակապով զրուցել ռուսաստանաբնակ Վլատիմիրի հետ։



Նկ. 2. Նար-Դոսի որդեգիրը՝ Մարիա Եգորովնան



Տողերիս հեղինակը՝ ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Նար Յովհաննիսեանի տանը՝ Նար-Դոսի ծոռան՝ Միխայել Մարութեանի եւ վերջինիս հիւրընկալ ու բարեհամբոյր ընտանիքի ընկերակցութեամբ. ձախից աջ՝ Ռուբէն Մարութեանը, տիկին Սուսաննան, պարօն Միխայելը եւ Յասմիկ Մարութեանը: Վերջինս, ի դէպ, Նար-Դոսի աղջկայ՝ Յասմիկի ամուսնակիւն է:

Ընդհանրացնելով վերոգրեալը՝ կարելի է ասել, որ մարդկանց նիւթապաշտութեան, ինչպէս նաեւ անհաւասար շահերի մշտատեւ պայքարի ընթացքում Նար-Դոսի գրականութիւնը որոնելու ենք որպէս ինքնամաքրումի հայելի: Ժամանակակից մարդն աւելի, քան երբեւէ, ունի Նար-Դոսի գրականութեան կարիքը: Նրա գրեթէ բոլոր երկերի («Մեր թաղը», «Աննա Սարոյեան», «Սպանուած աղանին», «Պայքար», «Մահը» եւ այլն) գաղափարական ենթաշերտերում ուսումնասիրութեան է ենթարկւում մարդն իր դրական ու բացասական, հասկանալի ու հակասական կողմերով: Նար-Դոսը, սակայն, համընդհանուր ողբասացութեան չի վերածում իր երկերը: Նա, իր ստեղծագործութիւնների մէջ կեանք-մահ յարաբերակցութիւնը դիտարկելով միեւնոյն հարթութեան վրայ, յստակօրէն ընդգծում է կենսականութիւնը: Նար-Դոսը չտրուեց հասարակական բուռն կեանքի յորձանուտին, փոխարէնը խորութեամբ ուսումնասիրեց իր ժամանակը, փորձութիւններ ճաշակած մարդու հոգեբանութիւնն ու միջավայրը: Պատկերելով մարդուն՝ արձակագիրը կենդանագրում է նաեւ նրա ժամանակը, որից, ի հարկէ, շատ տարիներ են անցել, սակայն երեւոյթների եւ իրողութիւնների նկատմամբ ունեցած մարդկային դատողութիւններն ու ընկալումները, կարելի է ասել, մնացել են նոյնը: Կանգնած լինելով հայ հանրային-քաղաքական կեանքի անցումային շեմին՝ Նար-Դոսը շօշափում է կենսական, գաղափարա-գեղարուեստական եւ բարոյա-հոգեբանական այնպիսի հետաքրքիր հիմնահարցեր, որոնք արդիական նշանակութիւն ունեն նաեւ այսօր¹³:

ՏԱԹԵԻԿ ՄԵՐՁԱՆԵԱՆ

բան. գիտ. թեկ. ԵՊՀ Հայ բանասիրութեան ֆակուլտետի
ակադեմիկոս Հրանդ Թամրազեանի անուան հայ գրակա-
նութեան պատմութեան ամիպիոնի ասիստենտ

¹³ Ներկայ օրերում «Սպանուած աղանին» գրաւում է ոչ միայն գրականագէտների, այլեւ ֆիլմարտադրողների ուշադրութիւնը. 2009 թ. «Երեւան» ստուդիան էկրանատրեց այն, որը ջերմօրէն ընդունուեց արուեստասէր հասարակութեան կողմից: